# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.06.2015



Սիրելի՛ երեխաներ

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ աշխարհի ամենաբարի և լուսավոր տոնի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Դուք մեր երկրի վաղվա օրն եք, մեր հույսն ու հզոր, զարգացած հայրենիքի կերտողները: Ցանկանում եմ, որ անհոգ մանկությունը դառնա ձեր ճակատագրի բարի շառավիղը և ձեր հոգեկերտվածքի պատվանդանը: Մեր պարտքն է պաշտպանել ձեզ և ապահովել ձեր անհոգ, ուրախ ու լուսավոր մանկությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ պայծառ այս տոնի կապակցությամբ և մաղթում առողջություն, ջերմ արև՝ անամպ երկնքում ու սեր ամենուր և ամեն պահ:

**Արարատի մարզպետ**

**Ռ. Աբրահամյան**